

ու մարդասիրութիւնը։ Ամուլ և անմարդաբնակ դաշտեր խեղճ կերպով մը շակուած և վիպական անտառախիտ լեռներ, որոնք տժգոյն և խրոխտ մարդկանց սերնդեան մը բնակարան կը հայթայթեն։ Երկրին նման տխուր և լուրջ է Արագոնացին, և միանգամայն ամբարտաւան, անխօս ու կեղծաւոր։ Բայց այս խոշոր կեղեին տակ ունի պատուական բնաւորութիւն մը գեղեցիկ յատկութիւններով զարդարուած։ և Սպանիացւոց ոմանց վկայութեանն համեմատ՝ սիրելի ու մեծարոյ է Արագոնացին երբ լաւ ճանչցուելու ըլլայ։ Արագոնիոյ ժողովուրդը գեռ ևս չյղկուած մեծագին գոհար մ'է, կամ լաւ ևս ըսելով անհոգ ժողուած և անկիրթ տըզու մը կը նմանի։ Արագոնիոյ այժմեան ժողովուրդն ու բարեը՝ զիսաւորապէս Մաւրիտանացւոց դէմտրուած պատերազմաց և անոնց յաջորդող Արագոնացւոց տիրապետութեան ժամանակ ձևացան։ Անկիրթ, աննկուն ու ազատասէր պատերազմողաց խումբ մը՝ հիմն աղիր եղաւ Արագոնիոյ միապետութեան, որ յետ միացընելու իւր հետը կադալօնիան, վալենցան ու Բալէարեան կղզիները, երկար ժամանակ եւրոպիոյ քաղաքական պատահարաց մէջ կարևորագոյն մաս ունեցաւ։

Ժողովուրդ մը որ իր սեփական երկիրը սըրով ոտն առ ուն ստացեր էր, և իւր անձնական ուժով մեծցեր ու զօրացեր էր, չէր կրնար փառասէր ամբարտաւան ու յամառ չըլլալ, ու ինքը զինքը փոխանակ զինուց ու ազատ և ինքնիշխան կենաց տալու, խաղաղական զբաղմանց, վաճառականութեան, քաղաքական գործոց ու երկրագործութեան պատաղիլ։ Եւ բնական այս կերպով զարգացան ու զօրացան հետզիտէ հպարտութեան, գոռոզութեան, աշխուժութեան, վառվառունութեան, փառասիրութեան, յամառութեան, անգործութեան, զատարկաշրջութեան, անկախութեան և զինուց սէրը և ուրիշ ասոնց նման բարուց յատկացուցիչ սեփականութիւնք։ և այս բնաւորութեան

է որ մինչև ցայսօր մասնաւոր կերպով ուրիշներէն կը տարրերին Արագոնացիք։

Եւ իրաւցնէ ներկայապէս ալ Արագոնիա սպանիական բանակին արիասիրտ ու կիրթ զինուորներն ու երկրին աներկիւղ որսորդներ կը մատակարարէ, ինչպէս նաև յանդգնագոյն մաքսանենգիշներու աւազակներ։ և ընդհակառակնի Սպանիոյ մէջ չկայ կողմէ մը ուրերկրագործութիւնը ու արուեստները այնչափ երեսի վրայ թողուած ըլլան, ինչպէս Արագոնայի մէջ, թէպէտ և երկիրը յառաջադիմութեան այս երկու ճիւղերուն ալ կարգէ դուրս յարմար ըլլայ, մէջէն ամեն ուղղութեամբ բազմաջուր գետեր անցնելուն համար։

Արագոնայի մէջ, ինչուան այսօր Պասքեանց նման, առանձնաշնորհութիւնները (Fueros) ու սահմանագրութիւնը, ժողովրդեան սրտին մէջ աճած էին։ և այս իրաւունքները ամեն թագաւորք ճանչցան, նաև յետ որոյ որ ֆերտինանտոս Հինգերորդին ու իզապելլա Ռուաշնոյն ամուսնութեամբը՝ Արագոնիոյ ու կասղիլիոյ թագերը միացան իրարու հետ, ու Արագոնիոյ թագաւորութիւնը զարեցաւ առանձին կեանք ունենալէն։

Կը շարունակուի։

Բարոյական և քաղաքական տնտեսութիւններին։

(Տես երես 228.)

### ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՉԱՍԱՆԵՐՈՐԴ ԽՈՍԿԵՑՈՒԹԵԱՆ

Աշխատութեան աժեքը։

Յայտնի է թէ առհասարակ իրացագործ իրենց օգտակարութեանն համեմատ է, սակայն երբեմն օգտակարագոյն բաներն ալ աժեք չունին. զոր օրինակ՝ ոչ ոք կ'ընդդիմանայ որ չնչած

օղերնիս և օրուան լոյսը ամենաօդտակար են, և աժէք չունին. վասն զի Աստուծմէ ձրի պարգևեալ են մեղի. ջուրն ալ օդոյ և լուսոյ նման անհրաժեշտ կարեոր է մեղի և նոյնպէս աժէք չունի, և կամ դոյզն աժէք մը՝ երթալու բերելու համար կրելիք նեղութեան փոխան. և սակայն օդն, արեն ու ջուրը կրնան երբեմն ամենամեծ աժէք ունենալ: Օրինակ իմն. այն քաղաքներու մէջ ուր առ ձեռն պատրաստ ջուր չիկայ՝ շատ անգամ բերել տալու համար ծախք կ'ըլլուի. այսպիսի պարագայի մէջ ոչ թէ ջրոյն համար է եղած վճարքը՝ այլ մեղի բերողներուն կրած նեղութեանն համար: Քանի մ'օրինակ ալ յիշենք: Մեծ երաշտութեան մը ժամանակ պղտիկ քաղաքի մը հորերն ու ջրհորները բոլոր ցամքեր էին. աղքատներն հեռուները կ'երթային փոքրիկ ակունքներէ ջուր գտնելու, և քաղաք կը բերէին սուղ սուղ կը ծախէին: Բանն ինչուան այն կէտն հասաւ որ կնկան մէկը կով և հորթ մ'ունենալով հորթը ծախեց որպէս զի դոյլ մը ջուր առնու և կովս ապրեցնէ: Երկրորդ օրը առատ անձրե եկաւ և ոչ ոք կար ջուր գնող. կնիկը հորթը կորսնցնելուն վրայ կը վշաանար՝ առանց մտածելու որ եթէ այդ կերպով վաճառած չըլլար՝ հաւանականաբար նաև զկովն ալ կորսընցուցած պիտի ըլլար: Երեակայեցէք նաև Պորտոյի այգեաց կալուածատէր մը որ Ափրիկէ անապատին մէջ կարաւանով ճամբորդութիւն ընելով սաստիկ ծարաւէն մեռնելու մօտ ըլլայ, միթէ պէտք չէ որ գաւաթ մը ջուր գնելու համար ունեցած զինւոյն լաւագոյն տիկը ծախէ:

— Տարակոյս չիկայ. յայտնի է թէ այսպիսի պարագայի մէջ ջրոյն աժէքը իր քիչութեանը համեմատ է:

— Աղէկ. բայց ահաւասիկ ուրիշ օրինակ. կան չափ մը խորութեամբ փորուած հանքեր, և ստորերկրեայ ճեմելիքներն այնչափ երկայն են որ գործաւաց համար օդը կը պակսի ու չեն կրնար բանիւ. միթէ գործատեարք շատ

ստակ չեն վճարեր այն հանքերուն խորը օդ մոցընել կրցող արուեստագիտաց:

— Տարակոյս չիկայ, ըստ Աէննարտոս. դէմ ելած արդեկըներուն յաղթելու համար պէտք եղած ջանից և դժուարութեանց համեմատ վճարելու են:

— Շատ աղէկ. ահաւասիկ ուրիշ նոր օրինակ մ'ալ: Գործատան տէր մը գաւիթ մ'ունի լաթեղէն չորցընելու համար և անհրաժեշտ պէտք ունի արեւու. բայց զրացին պատին երկայնութեամբը երկու մէզը հեռաւորութեամբ կաղամախիներ տնկած է, որք արեւ կը խափանեն և խոնաւութիւն կը պատճառեն. ծառերն առ առաւելն հաղար ֆրանկ կ'ամեն, և սակայն գործատան տէրը պատրաստ է տասը հաղար տալու եթէ զանոնք հանէ: Այս պարագայիս մէջ ասանկ բարձր զին տալը ոչ իրին սակաւագիւտ ըլլալուն կամ դժուարութեանն համար է. վասն զի ծառերն հանելէն աւելի դիւրին բան չիկայ, և երբ արեւ կը ծագի՝ ամենուն համար է:

— Այս պարագայիս մէջ տուած զինն գործատան գաւթին մէջ արեւ զարնել տալու ունեցած պէտքին համեմատական է:

— Այնպէս է, Աէննարտոս. գործատէրը մեծ պէտք ունի արեւու և կը վճարէ գաւթին մէջ արեւ զարնել տալու պէտք եղած ծառայութեանն համար: Տեսանք քիչ մ'առաջ որ կնիկը և ճանապարհորդը միանդամայն ջրոյ մեծ պէտք ունէին, մէկը հորթը ապրեցնելու համար և միւսն 'ի ծարաւոյ չմեռնելու համար. ասոնք միայն իրենց եղած մեծ բարւոյն համեմատ յանձն կ'առնուն ամենամեծ գնով գնել զջուը. իսկ հանքին զիսաւորները այնչափ ստակ կու տան արուեստագիտաց միայն պատճառաւ որ շարունակարար հանքը փորելու համար օդ ներս խաւելով մեծ ծառայութիւն կ'ընեն իրենց: Ասոնց ամենուն հատուցած ստակն ինչ բանի համար է:

— Յայտնի բան է, իրենց եղած ծառայութեան վճարքն է :

— Եւ կը վճարեն սյն ծառայութեանց կարեութեանց համեմատ :

— Բայց, ըստ Լէոնարտոս, միթէ անիրաւութիւն չէ այնպէս սուղ վճարք առնուլ դոյզն գին ունեցող ծառայութեանց համար :

— Չեմ ժխտեր թէ երբեմն ըսածիդ պէս իրաւցնէ անիրաւութիւն կ'ըլլայ, բայց այս չէ խնդիրը, Լէոնարտոս. գործոյ մէջ զմարդիկ ինչպէս որ են զործածելու է առանց նեղանալու թէ ինչու լաւագոյն չեն : Սակայն ըսէ ինձի՝ միթէ դու ձրի կ'աշխատիս Լընուարի համար :

— Յայտնի է թէ ոչ . պէտք է որ ապրիմ :

— Կը հասկընամ, Լէոնարտոս, բայց օրը չորս ֆրանք վճարք կ'առնուս, և ահաւասիկ Պետրոս Պոնվալ, Յովհան-Լուգուիկ, Գուլիէլմոս Բէնսէ և ուրիշ շատերը քեզի չափ կ'աշխատին և հազիւ քու կէսդ կը շահին :

— Բայց իրենց աշխատութիւնը իմոյս չափ գժուար չէ :

— Ըսել է թէ, Լէոնարտոս, դու կը պահանջես ճարտարութեանդ և քեզի պէտք ունենալուն համեմատ. այլոց պէս աժողէքին համեմատ աշխատութեանդ վարձք կ'առնուս. Եթէ կարենայիր վեց ֆրանք առնուլ՝ յայտնի է թէ կ'ուղէիր և շատ աղէկ ալ կ'ընէիր. բայց մի գանդատիր երբ ուրիշներն ալ քեզի պէս կ'ընեն, ուրիշ կերպ անկարելի է այս աշխարհիս վրայ :

Որովհետեւ միայն աշխատութիւնն է որ կը վճարուի, իրաց աժէքն ընդհանրապէս նոյն է զանոնք արտադրող աշխատութեանց աժէքին հետ. արդ այս վերջինս զանազան պարագաներէ կախումն ունի :

Ահաւասիկ Լէոնարտոս 4 ֆրանք աւուրշէք ունի մանարանին գործիքները շտկելու համար. իսկ Պոննէ այրին 8 դանկ կը վաստըկի հիւսելէն. ինչու համար մեքենադործը տասն անդամաւելի կը շահի քան զայրին. ըսել է թէ

ուրեմն իր աշխատութիւնը տասնապատիկ աւելի կ'աժէ . ուրեմն ոչ թէ ժամանակը՝ կամ մարմնեղէն զօրութենիրառութիւնն է աշխատութեան աժէ. քը չափողը : Մշակն և որմնագիրը ժամացուցագործէ մ'աւելի կ'աշխատին՝ և թէ իբրև ուժոյ կիրառութիւն մտածելու ըլլանք. սակայն յիսուն գործաւորք կրնան գտնուիլ առաջնոց աշխատութիւնն ընողք, և յիսունէն մէկ մը միայն ժամացուցին մասերը շտկել կրցող : Անհամեմատ նուազ պէտք կ'ըլլայ ժամացուցագործի՝ քան թէ մշակի և որմնագրի . և սակայն շատ աւելի գժուար կը գտնուի, և ասոր համար ալ է որ աւելի կը շահին . Եթէ ուրիշ աշխատաւորք կը գանգատին այս նկատմամբ՝ իրենց պատասխանելու է թէ՝ Դուք ալ ժամացուցագործ եղէք եթէ կրնաք, և եթէ ունիք զձեզ այդ մանրամասն աշխատութեան տալու չափ համբերութիւն և ճարտարութիւն :

Ո՛րչափ զանազանութիւն նոյն իսկ ժամացործաց մէջ. օրինակ իմն. փայտէ ժամացոյցներ շինող գործաւորը շատ քիչ վաստակ ունի, մինչդեռ ծովային ժամացոյցներ և ամենաճիշդ ժամացոյցներ շինողը կրնայ շատ հարստանալ, սակայն շատերը կրնան առաջնոյն նման ժամացոյցներ շինել՝ մինչդեռ ոչ ոք կը նայ մրցիլ ամենաճիշդ ժամացոյցներ շինող գործատիրոջ հետ : Եթէ շատ փայտէ ժամացոյցներ ուզուին և գործաւոր մը տասը հատ շինէ մէկ ամենաճիշդ ժամացոյց շինողին տեղ, առաջնը կ'ըլլայ շահողը :

Օրն ՚ի բուն անիւ դարձընելու կամ կիր կրելու զբաղող գործաւորը կրնայ կարծել թէ փաստաբանը կամ մատենագիրը՝ որ բազմոցին վրայ զրքերովը կ'աշխատի՝ դիւրագոյն կեանք ունենան. բայց կը խաբուի. մտաւորական աշխատութիւնը շատ ծանր է. վասն զի մեծ ուշադրութիւն մոտաց կը պահանջէ, և շատ աւելի գժուար է քան զաշխատութիւն ձեռաց. այս բանս աղէկ կը համերնան այն շատ մը անձինք ուրի կը խորշին սոսկ նամակ մ'ալ զրելէն՝ նեղու-

թիւն չի կրելու համար : Օրինակի համար՝ շատ աւելի դիւրին է երկիր փորել, կամ կիր կրել՝ քան թէ զլուխ ճամեցնել ու հաշուել թէ որչափ հաղպէտք է տեղափոխել տեղ մը ճամբու վերածելու համար, և թէ ինչ հեռաւորութենէ պէտք է առնուլ ու կրել . ուրեմն իրաւացի ալ է որ այս աշխատութիւնն աւելի շահարեր և ամենուրեք մեծագոյն համարման արժանի ըլլայ : Ո՞րչափ զանազանութիւնք կան նաև մոտաւորական աշխատութեանց մէջ որոնց կան անձինք որ կարող են : Եթէ մեր կամ մերին նման աւանի մը առեւտրական գրագիրը կամ խանութպանը տեսնելու ըլլար ինչ որ մէկ օրուան մէջ կ'ընէ բարիզու, լոնտրայի, չամպուրկի կամ վաճառականական ուրիշ մեծ քաղաքի վաճառականը կամ մեծ գործակալը՝ հաղիւ հաղ կրնար աշուըներուն հաւատալ :

Աշխատութեան գժուարութիւն և պահանջուած ճարտարութիւն՝ ահաւասիկ այս է իրաց աժէքը . ուրեմն ճարտարութիւն ստանայն էական պայման մի է որ և իցէ արուեստի մէջ, զոր կարելի է ստանալ՝ ի պատճեկութեան, երբ կարողութիւնք աշխոյժ են և զօրաւոր և կարելի է մեծ ճիգն թափել առանց ոգեսպառ ըլլալու :

— Սակայն, ըստ բենեգիկոս Ռուսսէլ փայտահարը, կան ոմանք որ ուրիշներէն աւելի պատեհ ունին ճարտար գործաւոր ըլլալու . ես ինչ առիթ ունեցեր եմ անտառներուս մէջ :

— Տարակոյս չիկայ թէ կան ոմանք որ աւելի յաջողութիւն ունին քան զայլս ճարտար գործաւոր ըլլալու համար . բայց եթէ դու ալ կարդալ ու գըրել գիտնայիր, բենեգիկոս, եթէ քիչ մը ուսմոնք ըրած ըլլայիր, ապահով եմ որ մայրեսորութիւն ընելովդ հանդերձ աւելի շահելու հնարքը դատած կ'ըլլայիր : Ամենքը մի և նոյն ճարտարութիւնը չեն կրնար ստանալ, բայց իւրաքանչիւր ոք կրցածին չափ պէտք է ստանայ : Հիմակուան ժամանակս որ ընկերութիւնն ամեն մարդու համար

դիւրացուցած է կրթութիւնը՝ ոչ ոք կրնայ ինքզինքն անմեղաղիր ընել :

— Բայց, վրայ բերաւ Միքայէլ, եթէ շատ ըլլային ճարտար գործաւորք, ամենուն համար գործ չեր գտնուեր :

— Շատերը շատ անդամ կրկներ են քու ըածգ, Միքայէլ, գործաւորաց կրթութեան զարգացմանը հակառակելու համար, սակայն այս ալ սիսալ կարծիք է : Այս անպատեհութիւնը կրնար ծաղիկ եթէ մարդիկ իրենց ճարտարութիւնը լաւ չվարէին և մի և նոյն աշխատութեան տային զիրենք . զոր օրինակ մեքենագէտ մը աւելի կը վաստրկի քան զծեռագործովը . բայց եթէ ամենայն ոք մեքենագործ ըլլալ ուղէր՝ ամենուն համար զբաղանք չեր գտնուեր : Ճարտարութիւնը խոհեմութեան արգելք չէ . այլ պէտք է զատումն ցուցընել այնպիսի արուեստի մը ճեռք չիզարնելով՝ յորում պէտք եղածէն աւելի գործողը կան :

Բայց երբ աշխատութիւնն աղէկըն արութեամբ ըլլայ, և պէտք է որ ամեն մէկ գործաւոր աղէկ ընէ իւր ընտրութիւնը, ոչ չափազանց աշխատութիւն և ոչ ալ չափազանց ճարտարութիւն պէտք կ'ըլլայ : Արգարե գիտէ ամենայն ոք Գաղղիոյ հարստութիւնն ու յաջողութիւնը գործաւորաց ճարտարութեանն ու աշխատութեանը աճելուն համար է . աս պատճառաւ մեր քաղաքներէն ումանց մէջ հարստութիւնը ժողովրդէն աւելի երագ շատցաւ . անշուշտի Սուրբն Ստեփանոս (Saint Etienne) կամ՝ ի Միւլհուղ քան գործաւոր բիւրեղագործ կայ կամ կերպասի վրայ տպող, մինչդեռ կէս դար առաջ մէկ մը միայն հազիւ կար հոն, և սակայն ամենայն անհատ այն ատենէն շատ ամելի զբաղած է : Որչափ որ ըստած գործաւորներս թուով կը շատնային այս քաղաքներուս մէջ գործ գտնենուն պատճառաւ՝ գործաւորաց ամենայն զամերն ալ անսնց պատճառաւ կ'աւելնային . և իւրացնէ՝ հիմա ՚ի Ս. Ստեփանոս և ՚ի Միւլհուղ շատ աւելի կօշկաւ

կար, դերձակ և հիւսն կայ՝ քան որչափ երբեմն :

— Սակայն, ըսաւ Սոժոն, արուեստի մը գործաւորաց թիւը չիկրնար յանհունս աճիլ. եթէ աւելի հիւսն ըլլայ՝ քան թէ հիւսնութեան գործ, ըզբաղանք չեն գտներ.

— Այս է ճիշդ իմ ըսածս ալ, Սոժոն. պէտք է որ իւրաքանչիւր գործաւոր ձեռք զարնել ուղած արուեստին պէտքը մտածէ և թէ յաջողութեամբ գործ պիտի գտնէ արդեգք. գործաւորին ընտրելու ազատութիւնը՝ խոհեմութիւն ալ միանգամայն կը պահանջէ. իրեն կ'կյնայ խելքով ընտրութիւն մ'ընելը. աղատութեան հետևանք է պատասխանատու ըլլալը. մեր ապագան ձեռքերնիս է, մեզի կ'կյնայ անխոհեմութեամբ զայն չիմնասել. արդ անխոհեմութիւն կ'ընենք եթէ այնպիսի վիճակ մ'ընտրենք՝ յորում պէտք եղածէն աւելի վիճակաւորք գտնուին :

— Այս անխոհեմ ընտրութիւններն ընելու պատճառը, խորհրդածեց այն ժամանակ Պէրդրան, արուեստից և վիճակաց մէջ եղած մեծ զանազանութիւն է. եթէ իրարմէ շատ աւելի շահարերները չըլլային՝ մէկը թողով միւսոյն վըրայ չէին թափուեր ամենայն որ. այսօրուան օրս, օրինակ իմն, կը տեսնենք որ ամենայն որ գիւղական աշխատութիւնները կը թողուն քաղաքաց արուեստներն ընելու համար :

— Հիմնական է դիտողութիւնդ, Պէրդրան. բայց պիտի տեսնես որ թէ այս և թէ ուրիշ շատ պարագայի մէջ դարմանը վնասուն մօտ է: Մարդիկ չեն աշխատիր միայն ապրելու համար, նաև աղէկ ապրիլ կ'ուզեն և կարելի եղածին չափ լաւագոյն. քաղաքաց արուեստները լաւագոյն հատուցումն ունին քան զգիւղիցը. ասկէ կը հասկցուի որ շատ գործաւորներ առաջնոյն վրայ կը թափին :

— Այլ. Պ. Տիւքրէ, հաշիւնին աղէկ կ'ընեն արդեգք միշտ :

— Ո՛հ, այդ ուրիշ բան է, Պէրդրան. խօսքս անոնց նկատմամբ չէ որք իրենց

ծննդեան գեղերը թողլով ուրիշ միջոց չունին բայց եթէ հողագործութենէ ետ կենալ, շատ նեղուելնուն պատճառաւ. աս յայտնի է թէ աշխատութենէ կը վախնան. արդ քաղաքաց աշխատութիւնն ալ թէպէտ և արտաքսապէս այնչափ նեղանալի չէ՝ ունի ծանրութիւններն ու ձանձրութիւնները. ուստի կ'ըլլայ որ քաղաքաց մէջ ալ յաջողութիւն չեն գտներ, մանաւանդ թէ աւելի կը տուայտին. վասն զի դիտէք որ անհամեմատ աւելի աղքատք կան քաղաքներու մէջ. այսպիսեաց թշուառութիւնը նախընթաց դաս մի է անոնց նմանել ուղղողներուն :

— Այս փորձը, Պ. Տիւքրէ, շատ առղի կը նստի, ըսաւ Անդրէաս :

— Իրաւ է, սակայն փորձն ալ այսպէս կը ստացուի, զոր կ'ունենայ մարդս միշտ իւր այդ տուգանքը. բայց առաջ տանինք խօսքերնիս : Ուրիշ գործաւորներ ալ չէ թէ քաղաք կը թափին դիրագոյն աշխատութիւն գտնելու յուսով, այլ անկախութեան և հաճոյք վայելելու հաշիւներով, որ ինչպէս զիտէք արուեստ մ'ընտրելու ամենէն գէշ շարժիչներէն մէկն է. ուստի որովհետեւ քաղաքաց մէջ հաճոյից և վայելից առիթներն անպակաս են՝ պէտք չէ զարմանալ թէ շատ երիտասարդաց ու պատանեկաց կործանմանը պատճառ կ'ըլլան, որուն հետևանք կ'ըլլայ իրենց աղքատնալը, հիւսնդանալը և շատ անգամ ալ մահը : Այսպիսեաց խեղճ վիճակն ու վաղահաս վախճանը այլոց խրատ կ'ըլլայ :

— Ես չեմ ցաւիր այնպիսեաց վրայ, ըսաւ Տիւքրուր, իր սովորական դաժանութեամբը՝ նեղսիրտ բարերարի մը պէտ, արժանաւոր են :

— Թողութիւն կ'ընես, Տիւքրուր, պէտք է միշտ խեղճերու վրայ ցաւակցիլ՝ եթէ նաև իրենց սխալանօքն ընկած ըլլան. միայն թէ քու ըրածիդ պէս ընելու է, այսինքն չինմանելու է անոնց : Վերջապէս՝ շատերն ալ քաղաք կը թափին աւելի շահելու փափաքով մեծագոյն հատուցմամբ աշխատութեանց : Իւ

րաւ է որ ոմանկը ուշադրութիւն չեն ըներ թէ այս կամայն աշխատութիւնը լաւագոյն վճարմունք ունի աւելի կարողութիւն պահանջելուն պատճառաւ. և որովհետեւ այդ կարողութիւնը չունին՝ դատապարտուած են նուազ վճարմունքով աշխատութիւններ ընելու. և թէ պէտ գեղերէ ալ աւելի վաստակ ունենան՝ սակայն քաղաքաց մէջ եղած ծախուց շատութեանը հետ համեմատական չըլլալով շատ աւելի դժուարին վիճակի մէջ կ'իյնան :

Այլք արդարեւ աւելի կարօղ և խելացի ըլլալով քաղաքաց մէջ շատ գրտնուած դժուարին և շահաւոր արուեստներէն մէկ քանին ընտրութեամբ վրանին կ'առնուն . և ասոնք կը յաջողին եթէ գործունէութիւն և աշխատասիրութիւն ունին և ուրիշ յատկութիւններ, առանց որոց մէկու մը համար յաջողութիւն չիկայ, և ասոնց յաջողիլը հրապոյրք մը կ'ըլլայ շատ երիտասարդաց համար, մինչդեռ այլոց ձախորդութիւննանձ ըլլար իրենց : Բայց հոս ահաւասիկ դարմանը չարեաց մերձաւոր է :

Որովհետեւ շահաւոր արուեստից վերաբերեալ նիւթոց քիչ փնտըռող կայքիչ ալ գործաւոր պէտք կ'ըլլայ. այսու շուտով աշխատաւորաց թիւին առաւելութիւնը կ'իմացուի, որով և թոշակաց նուազիլը, աշխատութեան պակսիլը կամ ընդհատիլը : Ասով գործաւորք մէկ կողմանէ կը կորսնցընեն միւս կողմանէ շահածնին . և փոփոխութիւնն ալ որոնց ենթակայ են և շաբաթական դադարմունքն որ կ'ունենան՝ խրատ մը կ'ըլլան անոնց համար որ անխոհեմաբար կ'ուղեն թողուլ գեղերը և երթալ քաղաքաց մէջ խռնիլ :

Բայց, հարցուց Ռնորիոս, համարելով իսկ որ այս շահաւոր արուեստներէն մէկը վրանին առնելու համար պէտք եղած յատկութիւններն ունենալով գեղերը թողուցողները քաղաքաց մէջ գործ դժուն, իրաւոնէ մեծ շահ մ'ունին արգեգք :

— Կարծածնէն շատ նուազ, Ռնորիոս : Նախ և առաջ քաղքի մէջ բնա-

կիլը պատճառ է որ և իցէ գործաւորի այնպիսի ծախուց որ գեղերու մէջ չեն ըլլութիր. տարրեր զգեստ պէտք է հագուիլ որ միշտ աւելի սուզ է և քիչ դիմացկուն՝ որով ստէպ պէտք է նորը գընել : Նոյն իսկ, պէտք է ըսեմ, այս հագուստի տարրերութիւնը հրապոյրք է շատ մը գործաւորաց և մանաւանդ նորատիք աղջկանց համար որ ունայնամիրութեամբ իրենց կործանմանը կը դիմեն : Ասկէ զատ քաղաքաց մէջ ցնդման պատճառներ կան որոնցմէ խորշիլը գըժուարին է, և վայելք՝ որոնցմէ հեռու կենալու համար մեծ քաջութիւն պէտք է . այս ամեն բան ըրած շահերնուն մէկ մեծ մասը վատնել կու տայ :

Սակայն այս ծախքերն ըստ մեծի մասին կամաւոր են և համարելու ենք թէ գործաւոր մը իր անդրդուելի բնութեր կրնայ այս փորձութեանց դէմ դնել . բայց քաղաքաց մէջ ամեն բանի սղութիւնը այնչափ է որ ըստ իմկը վաստակի շատութեան շահը կը փճացնէ . ասոր համար է որ երբ քաղաքաց մէջ աշխատողին ապրուատը սուղցընող զանազան պատճառները համբենք և վերադիր ընենք անյաջողութեանց և փորձութեանց առիթները, ալ չենք զարմանար երբ կը տեսնենք որ քաղաքաց մէջ շատ աւելի նուազ գործաւորք քան թէ գիւղից մէջ պզտիկ դրամագուկ մը ձևացնելու կարող կ'ըլլան :

— Սակայն, վրայ բերաւ Պէրդրան, պատանիք և երիտասարդք անդադար գեղերէն ու աւաններէն քաղաքները կը թափին :

— Ասոր պատճառը յայտնի է, Պէրդրան . քու գործաւորացդ աւուրչէքը նուազ է քան ինչ որ է քաղաքաց մէջ . այս բանս բաւական է երիտասարդաց շատին միտքը հաստատելու՝ որք չեն կրնար ստուգապէս տեսնելու քաղաքաց մէջ բնակելու անպատեհութիւնները : Միրըպոյի մէջ երկու ֆրանք կը վաստրկիմ, կ'ըսեն իրենք իրենց, քաղաքի մէջ երեք ֆրանք . տարրերութիւնը աչքերնին կը զարնէ . բայց չեն տեսներ որ եթէ կէս մ'աւելի կը շահին :

**շատ** անգամ կրկնապատիկ ծախք կ'ը-  
նեն : Բայց աղէկ դիտէ , Պէրդրան , որ  
դարմանն ինչպէս ըսի , միշտ չարին մեր-  
ձաւոր է : Քաղաքի մէջ ապրելու գժուա-  
րութեան վախճանն այն կ'ըլլայ՝ որ ե-  
րիտասարդը կը դադրին հոն թափելէն .  
Նոյն իսկ թերես անխոհեմաբար գեղե-  
րէն գնացողներուն մէկ մասին դառնա-  
լուն պատճառ կ'ըլլայ :

— Բայց այս օգտակար վախճանը  
կերպ կերպ նեղութեամբ ձեռք կը բե-  
րուի :

— Հաւանական է , Պէրդրան . բայց  
ամենի համար ասանկ է երբ մար-  
դիկ խելացի խորհուրդներու մտիկ ընել  
չեն ուզեր , անխոհեմութեան հետևանք  
ները պէտք է կրել . սակայն պէտք է  
վստահ ըլլալ որ այս չարեաց կերպ մը  
հատուցումն ալ կայ : Արդ ինչպէս ճար-  
տար արուեստի մը մէջ գործաւորաց  
շատուրութիւնը թոշակացնուազելուն  
պատճառ կ'ըլլայ , նոյնպէս ալ գեղե-  
րու մէջ աշխատաւորաց քիչութիւնը  
հարկաւորապէս գներուն բարձրանա-  
լուն պատճառ կ'ըլլայ . այսպիսի պա-  
րագայի մէջ երկու բան կրնայ աւելի  
բռնել գործաւորները գեղերու մէջ և  
կամ հոն դարձնել . քաղաքներու մէջ  
աւուրշէքներու վար իյնալը և գեղերու  
մէջ բարձրանալը :

— Այս պարագայիս մէջ , Պ. Տիւ-  
րիէ , կալուածատեարց համար կ'ըլլայ  
կորուստը . պէտք կ'ըլլայ որ մենք աւելի  
սուղ աւուրշէք տանք :

— Յայտնի է , Պէրդրան :

— Ան ատեն ինչպէս կրնանք մեր  
ծախքերը գոցել :

— Ամենեին մի վախնար , Պէրդրան .  
մշակութեան ոճդ կը լաւցընես , վա-  
ճառքներդ աւելի սուղ կը ծախսես . վասն  
զի ամեն բանի գինը բերքերու ծախքին  
հետ միշտ հաւասարակշիռ ըլլալ կը  
նայի , ինչպէս քիչ ատենէն պիտի տես-  
նենք : Եւ իրաւցնէ . բերք կամ վաճառք  
ունեցող չիկայ որ կորուստով ծախէ ,  
բայց եթէ ծախորդութեան ժամանակ ,  
կարդէ դուրս պարագաներու մէջ . ան  
ալ քիչ մը ատեն . ապա թէ ոչ վաճառք

կամ բերք առաջ բերելէն ետ կը կե-  
նար : Պէտք չէ զարհուրիլ ուրեմն գե-  
ղերու գործաւորաց թոշակներուն յան-  
կարծ բարձրանալուն :

Նոյն իսկ հաւանական է որ բարձրա-  
նան , ահաւասիկ կանխաւ կը ծանուցա-  
նեմ ձեզի . վասն զի կը տեսնենք որ  
քաղաքականութիւնն հետզհետէ աւե-  
լի հաւասարապէս իւր բարիքները կը  
սփուէ և ամենայն տեղ մի և նոյն բար-  
ձրութեան կը վերածէ : Ոյս ալ կ'ա-  
ւելցընեմոր հարկը կը ստիպէ զգեղերը  
փութով բարեկարգութիւններ ընելու  
քան ինչ որ ինչուան հիմա է առ հասա-  
րակ , և քիչ մ'աւելի քաղաքաց տուած  
օրինակին հետևելու , ուր մեծ փոյթ և  
գործունէութիւն կայ յառաջադիմու-  
թեան : Պէտք է անտարակոյս մտաց  
մեծ ճիգն թափել՝ բայց վախճանը բա-  
րեկեցութեան աւելնալն է : Ո՞վ կրնայ  
գանգատիլ այս բանիս վրայ . անոնք  
միայն ողք չեն գիտեր թէ աղէկութիւնը  
քիչ քիչ և նեղութեամբ կը գնուի , և  
անոնք որ սրտի արիութիւն չունին :  
Բայց դու ասոնց դասէն չես , Պէրդրան :

— Ոչ , Պ. Տիւրիէ . և այս նկատմամբ  
շատ կ'ուրախանամ :

— Եւ մենք ամենքս ալ քեզի հետ ,  
ըսին շատը մէկէն :

— Ուրեմն աւելի ևս ուրախացէք .  
վասն զի այս բանս 'ի հարկէ պիտի ըլ-  
լայ , ես խօսք կու տամ :

— Աստուած տայ , պատասխանեցին  
ամենայն ունկնդիրք :

ՌԱԲ:

Կը շարունակուի :

## ԼՈՒԿԱՆՈՑ

Լուկանոյ՝ իտալական Զուիցէրիոյ քա-  
ղաքաց մէկն է , համանուն լճին հիւսի-  
սային եղերաց վրայ , զուարճալի դրից  
վրայ շինուած . և թէպէտ պղտիկ է , ու  
450 տուն ունի , բայց նոյն կողմանց  
զիսաւոր քաղաքն է : Փողոցները լայն  
են , ու քանի մը հրապարակներ և գե-